

**ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԳԵՐՇ. Տ. ԱՐԻՍ ԱՐՔ. ՇԻՐՎԱՆԵԱՆԻ ԿՈՂՄԷ
ԽՕՍՈՒԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ**

Միրելի սգակիր հոգեւոր եղբայրներ,
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ հայրեր,
Արժանաշնորհ հայրեր, հաւատացեալ ժողովուրդ եւ սիրելի հիւրեր,
Հոգեւոր պետեր քոյր եկեղեցիներու,
Հիւպատոսներ Երոսաղէմի պետութեանց,
Ներկայացուցիչներ Երուսաղէմի քաղաքապետութեան
եւ պաղեստինեան Ազգային իշխանութեան:

Արդարեւ, օրերէ ի վեր սուգի մատնուած էր մեր Առաքելական Սրբոց Յակոբեանց Աթոռը, եւ Պատրիարքական Գահը սեւ քողով պատուած է, որովհետեւ իր կեանքի վերջալոյսը մտաւ Աթոռիս 96-րդ գահակալը՝ Տ. Տ. Թորգոմ Սրբազան Արքեպս. Մանուկեանը, իր 93-րդ տարեկան հասակին մէջ: 22 տարիներու պատրիարքական իր գործունէութեան ընթացքին որպէս հոգեւոր պետ, որպէս հովուապետ Առաքելական մեր Ս. Աթոռի եւ որպէս հոգեւոր հայր մեր Զինուորեալ Միաբանութեան, տիւ եւ գիշեր անիկա աշխատեցաւ զարկ տալ մեր պատրիարքութեան եւ իր արթուն աչքերով եւ մտքով միշտ հսկեց այս Աթոռին բարօրութեան, պայծառութեան եւ յառաջդիմութեան վրայ: Իր կենսագրութիւնը այնքան երկար է, որ ցոյց կու տայ իր բազմալատակ տարիներու նուիրումը եւ գործունէութիւնը՝ արդիւնաբեր գործունէութիւնը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ՝ սկսելով Երուսաղէմէն եւ շարունակելով ծառայութիւնը Միացեալ Նահանգներու Արեւմտեան եւ Արեւելեան թեմերու մէջ երկար տարիներ որպէս Թեմակալ Առաջնորդ եւ ապա վերադառնալով այստեղ՝ իր հոգեւոր տունը, 1990թ. որպէս արժանընտիր Պատրիարք Հայոց Երուսաղէմի: Անիկա կրցաւ արդարեւ, վաստակիլ խորին յարգանքը մեր ողջ հոգեւորականութեան եւ հաւատացեալ ժողովուրդի՝ իր նուիրեալ եւ անխնայ ծառայութեամբ:

Օնաժ Պաղտատի մօտ Պարքուպայի մէջ, 1919-ին, Վանեցի գաղթական ծնողներէ, անիկա եկաւ եւ սնաւ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի մէջ հազիւ տասներկու տարեկան հասակին եւ մեծցաւ յայտնի, վաստակաւոր Պատրիարք Թորգոմ Արքեպս. Գուշակեանի շունչին, Յակոբ Օշականի եւ Շահան Պերպերեանի նման դաստիարակներու ներքեւ եւ ահա անոնց հոգեւոր եւ մտաւոր ազդեցութիւնը ինքը ժառանգեց եւ դարձաւ բանաստեղծ եւ մտաւորական եւ արտադրեց այնպիսի երկեր, որոնք այսօր մեր Պատրիարքարանը կը ցուցադրէ եւ կու տայ հաւատացեալ ժողովուրդին եւ այցելուներուն եւ արդարեւ մեզի համար փառք եւ պատիւ է անոր մտքերու արգասիքը:

Ես երկար պիտի չներկայացնեմ իր կենսագրութիւնը որովհետեւ շատ բան կայ ըսելիք իր մասին, բայց ժամանակը թոյլ չի տար:

Երաժշտի իր հետաքրքրութիւնը եւ հմտութիւնը մանաւանդ որպէս Կոմիտասագետ յայտնի եղաւ մեր Հայոց աշխարհին: Անոր «Կոմիտասի հանճարը» որ հրատարակուած է իր իսկ կենդանութեան, վկայութիւն մըն է այդ մասին:

Աստուած բարի հովիւներ մէջտեղ կը հանէ որպէսզի Եկեղեցւոյ առաքելութիւնը առաջ տարուի: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս ըսաւ. «Ես եմ Յարութիւն եւ կեանք, ով որ ինծի կը հաւատայ անիկա յաւիտենական կեանքի պիտի արժանանայ»: Եւ ահա յարութեան այդ պատգամը մեր հաւատքի խարիսխն է սիրելի հաւատացեալներ: Մեր քրիստոնէական

Եկեղեցին հիմնուած է Յիսուսի հրաշալի յարութեան վրայ եւ այդ ձեւով մեր Տէրը մեզի ցոյց տուած է յաւիտենականութեան ճանապարհը, ով որ այս աշխարհի վրայ զինք կ'ընդունի, զինք կը խոստովանի, Յիսուս Իր Երկնաւոր Հօր առջեւ կ'ըսէ զինքը պիտի ընդունի, խոստովանի, իսկ ով որ կ'ուրանայ զինքը այս աշխարհին վրայ, նաեւ Յիսուս զայն պիտի ուրանայ Երկնաւոր Հօր առջեւ:

Ահա այսպիսի խորունկ հաւատք մըն է որ հոգեւոր հովիւներ խոնարհ աստիճաններէ սկսած մինչեւ պատրիարքական եւ կաթողիկոսական բարձր աստիճանները կը հաւատան եւ կը քարոզեն մեր Տիրոջ Յարութիւնը, եւ մենք այսօր ալ կը հաւատանք որ մեր հանգուցեալ սիրելի հոգեւոր հայրը Ս. Թորգոմ Սրբազան Պատրիարքը այլեւս բնութեան հետեւանքով տկարանալով, կքելով տարիներու ծանրութեան տակ հրաժեշտ կու տայ մեզի եւ այս երկրաւոր կեանքին, բայց կ'երթայ միանալու Աստուծոյ յաւիտենական Արքայութեան: Արդարեւ, մինչեւ վերջին այս տարին անիկա մնաց աննկուն հսկողը, խորաթափանց միտքը, ուշադիր հետեւողը մեր պատրիարքութեան զանազան խնդիրներուն, որոնք բազմատեսակ են, բայց ի վերջոյ կքեցաւ բնութեան պարզեւած ծանրութեան ներքեւ: Մենք փառք կու տանք Աստուծոյ որ անիկա ապրեցաւ լրիւ 93 տարիներու կեանք մը, որոնց 73 տարիներու ծառայութիւնը նուիրելով Աստուծոյ, ազգին եւ մանաւանդ մեր Առաքելական Սուրբ Աթոռին ու այժմ իր Յաւիտենական հանգիստը մտաւ: Մենք թէեւ կը տխրինք, բայց միւս կողմէ ուրախ կրնանք զգալ, որ անոր արգասաբեր կեանքը մեզի համար եւս եղաւ օգտակար եւ առաջնորդ:

Այս առիթով որպէս Տեղապահ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ կու գամ մեր շնորհակալութիւնները յայտնելու այն բազմաթիւ ցաւակցական նամակներու տէրերուն, որոնք մենք ստացած ենք այս վերջին օրերուն գրաւոր եւ նաեւ բերանացի: Բազմաթիւ այդ ցաւակցութիւնները մեզի եկած են զանազան կրօնական հոգեւոր պետերու կողմէ, հիւպատոսներու կողմէ, իսկ այս պահուն, անշուշտ, մենք անձամբ ունկնդրեցինք երեք նուիրապետական մեր աթոռներու գահակալներուն յղած ցաւակցական գիրերը իրենց ուղարկած ներկայացուցիչներու ձեռքով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գարեգին Բի, ցաւակցական գիրը գոր կարդաց պատարագիչ սրբազանը՝ Գերշ. Ս. Նաւասարդ Արքեպս. Կճոյեանը Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդը, եւ Գերշ. Ս. Վարուժան Արքեպս. Հէրկէլեանը Կիպրոսի Կաթողիկոսական փոխանորդը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ կարդաց Նորին Սրբութիւն Արամ Ա. Կաթողիկոսի ցաւակցական գիրը, եւ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ՝ Գերշ. Ս. Արամ Արքեպս. Աթեշեանը, որ նաեւ իր սրտի ցաւակցական խօսքը կատարեց: Մեր բոլոր երեք նուիրապետական աթոռներու գահակալներուն եւ իրենց այս ներկայացուցիչներուն Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք որ այս ծանր պահուն մեզ հետ ցաւակից եղան եւ իրենց մանաւանդ անձնական ներկայութեամբ եւ մխիթարական խօսքով մեզի պատճառ հանդիսացան որպէսզի շարունակենք մեր Առաքելական Աթոռի գործունէութիւնը այս քաղաքին մէջ:

Ապա Տեղապահ Սրբազանը խօսքը շարունակելով, անզերէնով, գնահատելով ներկայութիւնը եկեղեցիներու հոգեւոր պետերուն, հիւպատոսներուն, ներքին գործոց նախարարութեան քրիստոնէական բաժանմունքի տնօրէն՝ Տօքտոր Սեզար Մարժիէին եւ Երուսաղէմի քաղաքապետի ներկայացուցիչներուն, Պաղեստինեան իշխանութեան պատուիրակութեան անդամներուն, Հայաստանի Հանրապետութեան Իսրայէլի դեսպան Տիար Արմէն Մելքոնեանին, Պատուոյ հիւպատոս Յովակ Մոմճեանին եւ բոլոր այն անձանց, որոնք եկած էին Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սուգը բաժնելու հանգուցեալ Պատրիարք Ամենապատիւ Ս. Թորգոմ Արք. Մանուկեանի մահուան առթիւ: Ան Յակոբոս Տեառնէրբայր Առաքելոյն Աթոռոյն 96-րդ գահակալն էր: Երիտասարդ հասակէն նուիրուած էր հայ եկեղեցւոյ

ծառայության Երուսաղեմէն մինչեւ Հիւսիսային Ամերիկա, որպէս Առաջնորդ Արեւմտեան եւ Արեւելեան Թեմերու: 1990-ին ընտրուած էր Պատրիարք: Իր օրով Ս. Յարութեան Տաճարի նորոգութիւնը ամբողջացած էր: Այլ շինարարութիւններ իրագործուած էին: Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի սաներ ընդունուած էին Հայաստանէն: Բազմաթիւ գիրքեր հրատարակած էր եւ ոմանք անգլերէն թարգմանած: Քոյր Եկեղեցիներու հետ միջեկեղեցական յարաբերութիւններ հաստատած էր:

Տեղապահ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց բոլորին իրենց մասնակցութեան համար, մանաւանդ Ֆրանչիսկեան Միաբանութեան եւ իր մեծաւորին որոնք սիրայօժար կերպով Պատրիարք Սրբազանին 8 ամիսներ հիւրընկալեցին իրենց Մայրավանքի բուժարանին մէջ վերջին շրջանին մինչեւ իր մահը:

Տեղապահ Սրբազանը ցաւակցութիւն յայտնեց հանգուցեալ Պատրիարքի ընտանիքի հարազատներուն՝ եղբօրը՝ Տիար Սարգիս Մանուկեանին եւ տիկնոջ, Տիկին Սիլվա Մանուկեանին եւ որդւոյն Արա Մանուկեանին որոնք եկած էին Լոս Անճելըսէն, եւ Տիկին Անի Մանուկեանին:

Տեղապահ Սրբազանը խօսքը աւարտեց աղօթքով հանգուցեալ Պատրիարքին հոգւոյ խաղաղութեան համար:

22 Հոկտեմբեր, 2012

**Արիս Արքեպս. Շիրվանեան
Պատրիարքական Տեղապահ
Երուսաղեմի Ս. Յակոբեանց Միաբանութեան**



Օտար յարանուանութեանց պետերու եւ բարձրաստիճան հիւրերու
ներկայութիւնը հանգուցեալ Պատրիարք Սրբազան Հօր
Վերջին Օծման եւ Թաղման առթիւ: